

ՆՈՐ ԴՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ — «Ավանդապատում», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., 530 էջ, տպաքանակը՝ 5000:

Ավանդությունները ժողովրդական բանահյուսության այն ստեղծագործություններից են, որոնք մեզանում մինչև այժմ ամրողչական ձևով չեն հրատարակվել և չեն արժանացել մասնագիտական ուսումնասիրության: Ներկա աշխատությունը, որ Արամ Ղանալանյանի խորաթափանց մտքի արգասիքն է, գալիս է լրացնելու այդ բացը:

Հայ ժողովրդական ավանդություններին նվիրված այս հատորում, որ կրում է «Ավանդապատում» խորագիրը, լուսարանված են ավանդությունների առանձնահատկությունների, նրանց ճանաչողական ու գեղարվեստական արժեքի հարցերը, հանգամանալից քննության է ենթարկված հայոց ավանդույթների ազգային բնույթն ու բովանդակությունը:

Հատորում տեղ են գտել 900-ից ավելի ավանդություններ և ավանդադրույցներ, իրենց շուրջ 400 տարբերակներով կամ վարիանտներով:

Հեղինակը այդ ամենը հավաքել է զանազան տպագիր և ձեռագիր աղբյուրներից, ի մի է բերել, խմբավորել է ըստ տեսակների ու բովանդակության և տվել է դրանց բաղմակողմանի վերլուծությունը:

Աշխատությունը բաղկացած է Ուսումնասիրություն և Ավանդապատում բաժիններից:

Ուսումնասիրություն բաժինն իր հերթին ունի երեք գլուխ՝ Ավանդությունների մասին ընդհանրապես, Հայոց ազգային ավանդույթները, Միջազգային և եկամուտ ավանդություններ: Ավանդությունների մասին՝ ընդհանրապես գլխում խոսվում է նրանց բանավոր արձակի մեջ ունեցած տեղի, ժանրային առանձնահատկությունների, տեսակների, պատմական ճակատագրի, ճանաչողական արժեքի, գաղափարական և գեղարվեստական արժեքի մասին:

Հայոց ազգային ավանդույթներում լուսարանված է հայ բնաշխարհի (լեռներ, քարեր, ջրեր, բույսեր և կենդանիներ, քրիստոնեական հավատալիքներ և այլն), ներքին կյանքի, այլազգի բռնակալների և հայրենի հերոսների ու նահատակների, մշակույթի գործիչների մասին եղած ավանդույթները: Եվ, վերջապես, այս բաժնի երրորդ՝ Միջազգային և եկամուտ ավանդություններ գլխում տրված են այն ավանդույթները, որոնց զուգահեռներն ու տարբերակները կան Հայաստանին հարևան ժողովուրդների մոտ:

Ավանդապատում բաժինը բաղկացած է երկու գլխից՝ Ստուգաբանական-բացատրական ավանդություններ և Վարքաբանական ավանդադրույցներ: Առաջինում զետեղված են արևի, լուսնի, աստղերի, լեռների, ժայռերի, բլուրների, ձորերի, դաշտերի, լճերի, գետերի, աղբյուրների, բույսերի, կենդանիների, գավառների, քաղաքների, գյուղերի, վանքերի, եկեղեցիների, մատուռների և գերեզմանների մասին մեր ժողովրդի մեջ եղած ավանդությունները: Երկրորդ՝ Վարքաբանական ավանդադրույցներ գլխում տեղ են գտել թագավորների, իշխանների, զորականների, պիտնականների, գրողների, արվեստագետների, բիրլիական և ավանդական դեմքերի, սրբերի ու ոգևորականների մասին եղածները:

Մենագրության վերջին՝ Գանկեր բաժնում առանձին-առանձին բերված են ավանդությունների և ավանդական զրույցների մեջ առկա բոլոր տեղանունները, անձնանունները և առարկայական անունները, որոնց օգնությամբ հեշտությամբ կարելի է գտնել ընթերցողին հետաքրքրող այն կամ այն նյութը:

Հատորն ունի նաև ավանդությունների տարածման հիմնական վայրերը ցույց տվող քարտեզ և զանազան հուշարձանների երեք տասնյակ լուսանկարներ:

А. Ш. МНАЦАКАНЯН—«О литературе Кавказской Албании», Издательство Академии наук Армянской ССР, Ереван, 1969 г. Тираж 2500, 220 стр.

Բաշտոցի անվան Մատենադարանի դիտական խորհրդի որոշմամբ ԳԱ հրատարակչությունը լույս է բնծայել Ա. Շ. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ»:

աշխատության ուսերեն թարգմանությունը մասնակի փոփոխություններով, Այն նվիրված է պատմական Հայաստանի արևելյան գավառների, հատկապես Արցախի և Ուտիքի, բազմադարյան գրականության պատմությանը:

Միջնադարյան Հայաստանի արևելյան գավառները մեր հին պատմիչների աշխատություններում կոչվել են տարբեր անուններով՝ Ինչպիսիք են՝ «Հայոց Արևելից կողմանք», «Հիւսիս-Արևելից կողմանք», «Կողմանք Արևելից», «Աղուանից կողմանք», «Խորին Հայք» և այլն:

Չորրորդ դարի վերջում տեղի ունեցող պատմա-քաղաքական իրադարձությունների հետևանքով Հայաստանի արևելյան գավառները բոնի կերպով միացվեցին բուն Աղվանքին և բոլորը միասին կոչվեցին մեկ անվամբ՝ Աղվանք: Այս իրավիճակը պատճառ դարձավ հետագայում այդ երկրների պատմությունը ուսումնասիրողներին շփոթելու Հայաստանի արևելյան գավառները բուն Աղվանքի հետ: Դրա համար էլ ներկա աշխատության հեղինակը նախքան իր ուսումնասիրության նյութին անցնելը, գրքի ներածականում՝ ելնելով պատմա-աշխարհագրական և էթնիկական տվյալներից, պարզաբանում է այս խիստ կարևոր խճողված հարցը:

Աշխատության հետագա գլուխները նվիրված են Աղվանից աշխարհի հայկական վերահիշյալ գավառների գրականության մի շարք հարցերի լուսաբանմանը:

Հեղինակը հենվելով իր ձեռքի տակ եղած հարուստ փաստական նյութերի վրա, մեր բանասիրության մեջ առաջին անգամ փորձում է վերականգնել Հայաստանի արևելյան գավառների գրականության ընդհանուր պատկերը: Մենագրությունը ընդգրկել է V—XIII դարերը և հիմնականում կրում է պատմա-բանասիրական բնույթ: Այն օգտակար է հայագիտությանը և աղվանագիտությանը՝ զբաղվողների համար:

Գրքի խմբագիրն է ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը:

ՂԵՎԻՆԴ ԱԼԻՇԱՆ — «Նամակներ», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969 թ., տպաքանակը՝ 1500, 274 էջ:

Ալիշանի «Նամակները», որ լույս է տեսել ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ, «Գրական ժառանգություն» մատենաշարի 5-րդ հատորն է: Այն կազմել, առաջաբանը գրել և ծանոթագրել է բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Շտիկյանը:

Մեծ է Ղ. Ալիշանի թողած ժառանգությունը: Ավելի քան քառասուն հատոր ինքնուրույն և թարգմանական աշխատություններ, բազմաթիվ հոդվածներ սփռված «Բազմավեպի» էջերում, մի շարք անտիպ աշխատություններ և այլն: Հասկանալի է, որ այսպիսի գրական հսկա ժառանգություն ունեցող գիտնական-հայագետը բաղմազան և բազմապիսի նամակագրական կապեր պետք ունենար ինչպես հայ, այնպես էլ եվրոպական մտավորականության ներկայացուցիչների հետ:

Հատորում զետեղված նամակները վերաբերում են նրա կյանքի գերազանցապես երկրորդ շրջանին, այսինքն՝ 1860-ական թվականներից մինչև 1901 թվականը: Սա այն ժամանակաշրջանն է, երբ Ալիշանը գեղարվեստական ստեղծագործության բնագավառում իր տեղը զբաղեցրեց հետո, աստիճանաբար նվաճում է նաև հայագիտության բարձունքները: